

3629



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան



« 28 » 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 074 - 25

Նախաձեռնող՝

«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ

Ք. Երևան, քոչարյան փ., 16 շ. Բն. 1

Գործունեությունը՝

Արթիկ համայնքի Հայրենյաց
բնակավայրում կրթահամալիրի կառուցում
Շիրակի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 074 - 25

« 28 » Տեպրեմբեր 2025թ.

Հայրենյաց բնակավայրում Կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /այսուհետ՝ ՇՄԱԳ/, նախագիծ
Գործունեության կատեգորիա՝ «Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Հայրենյանց բնակավայր

Ներածական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում է Հայրենյաց բնակավայրում իրականացնել կրթահամալիրի կառուցման աշխատանքներ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.24441 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կրթահամալիրը կառուցվելու է հին, քանդման ենթակա դպրոցի հողամասի սահմաններում: Ռելիեֆը հարթ է, աննշան թեքությամբ, բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 1571-1572 մմ սահմաններում: Հողամասի տարածքում առկա են 5 մատղաշ պտղատու ծառ, որոնք գտնվում են կառուցապատման ենթակա տարածքում: Համաձայն նախագծային լուծումների ծառերը կտեղափոխվեն և կվերատնկվեն նախատեսվող գործունեության տարածքում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերի հորիզոնները գտնվում են խորը հորիզոններում:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները, ինչպես նաև զգայուն էկոհամակարգերը, բույսերի և կենդանիների հազվագյուտ և Կարմիր գրքերի տեսակները:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 1.24441 հա,
- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 2631.3 մ²,



- կանաչապատման մակերեսը՝ 6121 մ²,
- բարեկարգման մակերեսը՝ 4908 մ²:

Համաձայն նախագծի՝ կրթահամալիրն իրենից ներկայացնում է երեք իրար կապած 200 աշակերտի համար նախատեսված երկհարկանի դպրոց և մեկ հարկանի, 40 սանի համար նախատեսված մանկապարտեզ: Դպրոցը նախատեսված է 1-ից մինչև 12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպման նպատակով:

Առաջին հարկում տեղակայված են դասասենյակներ, ներառական կրթության սենյակը, տարրական դպրոցի մարզասրահ-խաղասենյակը, կենսաբանության և քիմիայի կաբինետները՝ իրենց լաբորատորիաներով, ճաշասրահը, հանդիսությունների դահլիճը՝ հանդերձարաններով, տնօրենի աշխատասենյակը և քարտուղարությունը, բժշկի սենյակը, տղաների, աղջիկների և հաշմանդամների համար նախատեսված սանհանգույցները և այլն:

Երկրորդ հարկում նախատեսված են դասասենյակներ, ռազմագիտության, ռոբոտատեխնիկայի կաբինետները, ուսուցչանոց, սանհանգույցներ, մարզադահլիճի տրիբունա: Դասավանդումը առանձին առարկաների գծով անցկացվում է ընդհանուր ուսումնաման կաբինետներում: Կաբինետները կահավորված են ցուցադրական և աշակերտական լաբորատոր սեղաններով: Քիմիայի լաբորատորիայում տեղադրված է օդաքաշ պահարան: Լաբորատոր սեղանները համալրված են վարդակներով, քիմիաի լաբորատոր սեղանները լրացուցիչ համալրված են ջրի ծորակներով: Դասարանները նախատեսված են 12 աշակերտի համար:

Մանկապարտեզի մասնաշենքը միջանցքով կապված է դպրոցական մասնաշենքի հետ: Մանկապարտեզում նախատեսված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, և ննջարաններ երեխաների համար, ինչպես նաև վարիչի, բժշկի սենյակը մեկուսարանով և դայակների սենյակները: Սակավաշարժուն խմբի երեխաների համար նախատեսված է վերելակ:

Կրթահամալիրի տանիքը լինելու է պողպատե ծածկով, հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Նկուղային հարկը կարող է ծառայել որպես ժամանակավոր թաքստոց: Նկուղային հարկում բացի նկուղային սրահ-տարածքից տեղակայված են սանհանգույց և օժանդակ սենյակներ: Կրթահամալիրի ջերմամատակարարման նպատակով նկուղային հարկում նախատեսվում է նաև տեղադրել 120 կՎտ ջերմային հզորությամբ՝ -25°C ռեժիմի համար նախատեսված էլեկտրական երկու կաթսա:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ կրթահամալիրն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Կրթահամալիրի մուտքերը կահավորված են լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Կրթահամալիր բակում նախատեսվում է տեղադրել 150 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 286 հատ 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներ: Շենքի էլեկտրամատակարարումը և կրթահամալիրի էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև



հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

Քանի որ կրթահամալիրը կառուցվելու է հին դպրոցի տարածքում, որտեղ առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման գծերը շահագործման ընթացքում նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին: Շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՏ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից, տեղադրելով առանձին հաշվիչ: Ժամանակավոր էլեկտրամատակարարումն իրականացվելու է հին դպրոցի տարածքից:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոկոունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների լվացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ջրօգտագործումն ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (23 մարդ), կկազմի 367.16 մ³/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 9824 մ³/շին.ժամ: Ջրցանի և անիվների լվացման համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 3684 մ³/շին.ժամ: Շինարարական հրապարակին կից նախատեսվում է տեղադրել պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և բետոնաջրերը: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի համար, իսկ փոքր քանակներով տիղմը մնացած շին. աղբի հետ կտեղափոխվի աղբավայր:

Գործունեության ընթացքում քանդման աշխատանքներն իրականացվելու են մեխանիկական եղանակով՝ ապամոնտաժվելու են բոլոր շինությունները: Ապամոնտաժվող շենքերը, հիմնականում, քարե կոնստրուկցիաներով շինություններ են, մետաղաթիթեյա ծածկով: Սկզբում կիրականացվեն դպրոցի շենքի տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամոնտաժումը: Քանդման ընթացքում առաջացած թափոնները տեղափոխվելու են շին հրապարակից 1կմ հեռավորության վրա դեպի արևելք գտնվող աղբավայր՝ ըստ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանից տրված տեղեկանքի:

Շինարարական աշխատանքների ընթացքում ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Հողի բերրի շերտի՝ 1750 մ³ ծավալով բուսահողի պահպանությունը կիրականացվի Կառավարության 2017 թ. նոյեմբերի 2-ի N 1404-Ն որոշման պահանջներին համաձայն և այն կօգտագործվի հետագայում կանաչապատման նպատակով: Ե/բ հիմքերի տեղադրման համար հանվող հողային զանգվածից մի մասը կօգտագործվի հետիցքի համար, իսկ ավելացած հողային զանգվածը կհեռացվի Արթիկի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր: Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման



ընթացքում կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային կեղտաջրերը արաքին ցանցի միջոցով հեռացվելու են դեպի FBR-15 արտադրողականությամբ մաքրման կայան: Կենսաբանական մաքրման ենթարկված կեղտաջրերը, նվազեցնելով իրենց բակտերիալ աղտոտվածությունը կուլորդվեն կուտակիչ հոր և կօգտագործվեն ոռոգման համար: Ավելցուկային ջրերը կհեռացվեն ջրահեռացման ձորակի միջոցով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն համաձայն Արթիկ համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի: Տնկվելու են նոր ծառեր. կաղնի վրացական՝ 42 հատ, սոճի կովկասյան՝ 24 հատ, գիհի՝ 15 հատ:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության դիսկեր նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի չափումներ՝ ըստ անհրաժեշտության,

- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ պարբերաբար,

- փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար,

- մեքենաների ապահովում խլացուցիչներով, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարական և կենցաղային աղբի կանոնավոր տեղափոխում հատուկ հատկացված վայրեր՝ սահմանված երթուղիով,

- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով,

- նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Շիրակի մարզի Հայենյաց բնակավայրում կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Շահագործման ընթացքում շենքի կանաչ տարածքների և ծառերի խնամքը կիրականացվի դպրոցի կողմից: Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի կրթահամալիրի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու



վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Շիրակի մարզպետարանը, Արթիկի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Շիրակի մարզի Հայրենյաց բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերի պահպանման համար:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ - ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հայրենյաց բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Էրիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Ռուզան Մակինյան